ՄԻԼԻՑԻԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՎԱՆԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ
(1915 թ. հոկտեմբեր – 1916 թ. սեպտեմբեր)

ՌՈՒԲԵՆ ՍԱՀԱԿՅԱՆ

1915 թ. մայիսին Վանը և նահանգի մեծ մասն ազատագրելուց հետո Կովկասյան բանակի հրամանատարությունը հայերից կազմեց Վանի ժամանակավոր վարչություն, որը գլխավորեց հայ ազատագրական շարժման ականավոր գործիչ Արամ Մանուկյանը: Իշխանության այլ մարմինների հետ կազմակերպվում է դատաիրավական համակարգը, այդ թվում՝ ոստիկանությունը[1]: Սակայն ռուսական բանակի հուլիսյան նահանջից հետո Վանի հայկական իշխանությունը չվերականգնվեց. 1915 թ. հոկտեմբերին նշանակվեցին ռուս պաշտոնյաներ՝ նահանգապետ, գեներալ Պավել Վորոնովը, իսկ օկրուգի (գավառակի, շրջանի) պետ, ոստիկանության փոխգնդապետ Ալֆրեդ Տերմենը[2]:

Ի տարբերություն նահանգապետի, գավառակի կամ շրջանի պետ Ա. Տերմենը, ով Թուրքեստանի գեներալ-նահանգապետությունում (Անդիջան) և Հեռավոր Արևելքում՝ Չինաստանում (Մուկդեն)[3] զբաղեցրել է ոստիկանապետի պաշտոն, տեղաբնիկների հետ աշխատելու զգալի փորձ էր ձեռք բերել, միաժամանակ երկու հետազոտության[4]

---

[1] *Տե՛ս Ռ. Սահակյան. Վանի նահանգապետության դատաիրավական համակարգի ձևավորման պատմությունից.– "Բանբեր Հայաստանի արխիվների" (այսուհետև՝ ԲՀԱ), 2006, № 1, էջ 48–65, նույնի՝ Հայկական ոստիկանության կազմակերպումը և գործունեությունը Վանի նահանգապետության շրջանում (1915 թ. մայիսի 8 – հուլիսի 17), Երևան, 2008:*

[2] *Գյուղատնտես, հասարակական գործիչ Աշոտ Աթանասյանը (Սալ-Սան) հետևյալ կերպ է նկարագրել Ա. Տերմենին. "Վանի նոր նահանգապետը (գավառակի պետը – Ռ. Ս.) 50 տարեկանի մօտ մի անձ է. թիկնաւէտ, միջին հասակի, իր շարժումների մէջ վերին աստիճանի քաղաքավարի և սիրալիր: Նրա ֆրանսիական ծագումը դրել է Տէրմէնի (Տերմենների նախնիները եկել են Ռուսաստան XVIII դարում – Ռ. Ս.) վրա իր կնիքը. եռուն, ոգևորվող, երազող և անկեղծ: Նա ամբողջովին տարված էր իր առաջիկայ պաշտօնի և միսսիայի խնդիրներով ու հոգսերով" [տե՛ս "Մշակ" (Թիֆլիս), 25. X. 1915]: 1916 թ. հոկտեմբերին Ա. Տերմենին փոխարինում է գեներալ Վլադիմիր Բուրկովսկին [տե՛ս "Աշխատանք" (Երևան), 15. X. 1916]:*

[3] *1900 թ. Մուկդենը (այժմ՝ Շենյան) գրավվել էր ռուսական զորքերի կողմից և այնտեղ հաստատվել էր ռուսական վարչակարգ:*

[4] А. И. Термен. Среди бурят Иркутской губернии и Забайкальской области. Очерки и воспоминания. СПб., 1912; он же. Воспоминания администратора. Опыт исследования принципов управления инородцев. На правах рукописи. Петроград, 1914.

հեղինակ էր: Նա հասկանում էր, որ առանց տեղացիների օգնության հնարավոր չէ արդյունավետ գործել: Դա էր պատճառը, որ Ա. Տերմենն առաջին հերթին հայերից կազմակերպում է կառավարման մարմիններ՝ քաղաքապետարան, դատարան[5], տնտեսական մարմին, ոստիկանություն[6] և միլիցիա: Վերջինիս անդամներին հայերն անվանում էին երկրապահներ, և նրանք իրականացնում էին բազմաբնույթ գործողություններ, որոնք հատուկ էին ներքին զորքերին՝ կարգուկանոնի պահպանում, վերադարձող վասպուրականցիների ու գյուղատնտեսական աշխատանքներով զբաղված հայերի, ասորիների և եզդիների անվտանգության ապահովում, իսկ անհրաժեշտության դեպքում՝ հետախուզական գործունեություն:

Միլիցիայի կազմակերպման նախաձեռնությունը պատկանում է Ա. Տերմենին[7]: Հայաստանի վերաշինության հանձնաժողովի (ՀՎՀ) անդամների[8] հետ հանդիպման ժամանակ պայմանավորվում են, որ միլիցիան զենքը կստանա ռուսական հրամանատարությունից, իսկ պահպանման ողջ ծախսն իր վրա է վերցնում ՀՎՀ-ը[9]:

---

[5] Ի տարբերություն Արամ Մանուկյանի գլխավորած Վանի ժամանակավոր վարչության (նահանգապետության), ուսումնասիրվող ժամանակաշրջանում Վան-Վասպուրականում գործող դատարանը, քաղաքապետարանը, միլիցիան չունեին մշակված օրենքներ: Դատարանը գլխավորում է Աղաբեկ Համբարյանը, որի օգնականն էր Հակոբ Սմսարյանը: Ա. Համբարյանի կողմից դատական վարույթներն ընթացել են "Վանի "ադաթներով" և իր խղճով" (տե՛ս "Մշակ", 9. XII. 1915):

[6] Ժամանակի մամուլի հրապարակումներից հետևում է, որ Վանի քաղաքային ոստիկանությունը սկզբնապես գլխավորել է Արսեն Գեորգ-Բեկյանը, որին այդ պաշտոնում փոխարինել է Նշան Հակոբյանը, ապա՝ Հրանտ Գալիկյանը: Նա ուներ տեղակալ և 25 ոստիկան: Քաղաքը բաժանվել է ոստիկանական չորս տեղամասի [տե՛ս "Վան-Տոսպ" (Թիֆլիս), 31. I. 1916, էջ 3, 29. XI. 1915, էջ 16, "Մշակ", 1. XII. 1915]: Հ. Գալիկյանը Վանի հայկական նահանգապետության շրջանում վարել է ընդհանուր դատախազի պաշտոնը (տե՛ս Ռ. Սահակյան. Վանի նահանգապետության դատաիրավական համակարգի ձևավորման պատմությունից, էջ 49):

[7] Ա. Տերմենն իրավապահ մարմինը ձևավորում էր իր անձնական պատասխանատվությամբ: Դա էր հիմնական պատճառներից մեկը, որ ռուսական հրամանատարությունը և, հատկապես, նահագապետ Պ. Վորոնովը օրինական չէին համարում միլիցիայի գոյությունը, սակայն անհրաժեշտության դեպքում օգտագործում էին հայկական միլիցիան իրենց նպատակների համար:

[8] Հանձնաժողովի նախագահն էր Դավիթ խան Ական-Յուզբաշյանը, փոխնախագահները՝ Համբարձում Առաքելյանը, բժիշկ Բագրատ Նավասարդյանը, գանձապահը Ալեքսանդր Մելիք-Ազարյանը, անդամները՝ Միքայել Արամյանցը, Միքայել Աթաբեկյանը, Ավետիք Եզեկյանը, Ստեփան Մալխասյանցը (քարտուղար), Միքայել Մինասյանը, Խաչատուր Խաչատրյանցը (տե՛ս "Մշակ", 17. XI. 1915):

[9] "Մշակ", 5. XI. 1915:

Միլիցիայի հիմքը սկզբնապես կազմում էին ամերիկահայերը, ովքեր 1915 թ. օգոստոսի վերջին ժամանել էին ԱՄՆ-ից Կովկաս՝ կամավորական շարժմանը մասնակցելու համար, սակայն, տեղեկանալով, որ ռուսական հրամանատարությունը որոշել է լուծարել հայկական ստորաբաժանումները, ցանկություն են հայտնում Վանում անցնել ծառայության՝ որպես միլիցիա*: Նրանց թիվը 52 էր և գլխավորում էր ամերիկյան բանակի կապիտան, Վերակազմյալ հնչակյան կուսակցության անդամ Ջիմ (Պետրոս) Չանկալյանը*[10]*: Վերջինիս վկայությամբ, միլիցիայի կազմավորման մասին իրեն տեղեկացրել էր կուսակցական ընկերը՝ Պետրոս Տեփոյանը: Օգոստոսին Ջ. Չանկալյանն անձնական հանդիպում է ունենում Ա. Տերմենի հետ, ով իր համաձայնությունն է տալիս նրան ու ընկերներին միլիցիայի կազմում ընդգրկելու մասին*[11]*: Նախատեսվում էր ստորաբաժանումում ընդգրկված անդամների թիվը հասցնել 200-ի*[12]*, որը չափազանց քիչ էր նահանգում ոչ միայն օպերատիվ իրադրությունը վերահսկելու, այլև իրականացնելու հետախուզություն և տեղական նշանակություն ունեցող մարտեր՝ ընդդեմ թշնամական զանազան ուժերի: Անհրաժեշտ էր հաշվի առնել, որ լեռներում շարունակում էին մնալ զգալի թվով քրդական ջոկատներ, որոնք հարմար առիթը չէին կորցնում հարձակվելու հայկական բնակավայրերի վրա: Բացի այդ, քուրդ ցեղապետերից ոմանք "հպատակություն" էին հայտնում ռուսներին և վերադառնում իրենց գյուղերը, սակայն հարմար առիթը չէին կորցնում վասպուրականցիների վրա հարձակվելու համար:*

1915 թ. հոկտեմբերի վերջերին փոխգնդապետ Ա. Տերմենը կազակներից և ամերիկահայերից կազմված պահակախմբի ուղեկցությամբ շարժվում է Վան:

1915 թ. դեկտեմբերին Վանից հաղորդում են, որ քաղաք մտնելուն պես միլիցիան անմիջապես իր հսկողության տակ է վերցնում քաղաքի շինությունները, ինչպես նաև՝ նոր կազմավորված որբանոցը[13]*: Ա. Եկարյանն ուսումնասիրելով տեղի գաղթականության ծանր վիճակը՝ դիմում է կաթողիկոսին՝ խնդրելով գումար տրամադրել նրանց դրությունը որոշ չափով բարելավելու համար: 1915 թ. նոյեմբերի 11-ին Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ի հրամանով Ա. Տերմենի անունով ուղարկվում է 4 հազար ռուբլի*[14]*, որը պետք է օգտագործվեր բնակչության օգնության համար:*

1916 թ. փետրվարի սկզբներին Ա. Տերմենի հրամանով միլիցիան Վանի նահանգում կատարում է բնակչության վիճակագրություն, որը նպատակ ուներ պարզել գյուղա-

---

[10] *"Հորիզոն" (Թիֆլիս), 21. IX. 1916:*

[11] *Ռ. Սահակյան. Փաստաթղթեր Վասպուրականի վերաշինության վերաբերյալ (1915–1916 թթ.).– ԲՀԱ, 2008, № 2, էջ 26:*

[12] *"Մշակ", 17. XI. 1916:*

[13] *"Վան-Տոսպ", 6. XII. 1916, էջ 14:*

[14] *Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 57, ց. 2, գ. 1289, թ. 22:*

ցիության իրական թվաքանակը՝ օգնությունն արդյունավետ կազմակերպելու համար[15]:

Ա. Տերմենը հայ ազգագրական շարժման նշանավոր գործիչ, Սահմանադիր-ռամկավար կուսակցության անդամ Ա. Եկարյանին նշանակեց միլիցիայի ստորաբաժանման հրամանատար[16]: Նման զինուժն անհրաժեշտ էր պաշտպանելու նահանգում և քաղաքում գտնվող 15 հազարի հասնող հայությանը[17]: Նախկին նահանգապետ Ա. Մանուկյանի օրոք հայկական ոստիկանության կուտակած փորձն ակնառու ցուցադրում էր, որ քրդերը, տեսնելով զինված հայերի թեկուզ փոքրիկ ստորաբաժանում, նախընտրում էին նրանց հետ մարտի չբռնվել: Սա կրկին ու կրկին ապացուցում էր, թե ինչպիսի կարևոր դեր կարող էր կատարել հայկական միլիցիան Վանում, եթե հնարավորություն տրվեր իրավապահ մարմինն էլ ավելի հզորացնելու և թվաքանակն ավելացնելու: Յավոք, ռուսական հրամանատարությունը չէր ցանկանում ոչ միայն կազմակերպել, այլև հոգալ նոր կազմակերպված հայկական զինված ստորաբաժանման կազմավորումը և ֆինանսավորումը, քանի որ ենթադրում էր գաղութացնել գրավված տարածքներն ու զանազան արգելքներ էր ստեղծում հայրենի վայրերը վերադարձող փախստական հայերի համար:

Այսպես, 1916 թ. հուլիսի 24-ի հրամանով գեներալ-նահանգապետ Նիկոլայ Պեշկովը (նա նշանակվել էր 1916 թ. հունիսին) Արմեշի օկրուգի պետին ուղղված հեռագրում նշել է՝ թույլատրել միայն այն անձանց վերադարձը Վան, որոնք ունեն միայն իր ստորագրությամբ և կնիքով վկայականներ[18]: Բացի այդ, Կովկասի իշխանությունները, փոխարքա Նիկոլայ Ռոմանովը, սին հույսեր էին տածում, թե հնարավոր կլինի "բարեկամական" հարաբերություններ հաստատել քրդական ցեղերի պարագլուխների հետ և նրանց օգտագործել իրենց նպատակների համար, որը, սակայն, չհաջողվեց[19]: Ինչ-

---

[15] "Վան-Տոսպ", 28. II. 1916, էջ 14:

[16] "Մշակ", 1. IX. 1915:

[17] "Հորիզոն", 7. IX. 1916: Ըստ շրջանապետ Ա. Տերմենի՝ միայն Վանում կար մոտ 5 հազար բնակիչ (տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1979, թ. 3): 1915 թ. մարտի 22-ին Վանի հոգևոր ներկայացուցիչ Հովհաննես վարդապետ Հյուսյանը Գևորգ Ե-ին ուղղված զեկուցագրում տեղեկացնում է. "Առաջնորդարանի համար յաջողած էնք շենք մը գտնել, բայց որպես զի տեղույն Առաջնորդութիւնը իր առաջնորդարանով կարող ըլլա կատարել իր դերը և ունենալ իր աջակցութիւնը ժողովուրդին և ուրիշներուն վրայ, անհրաժեշտ է ունենալ յարմար գրագիր մը, եթէ հնար է այդ գրագիրը ըլլայ նաև ռուսգէտ որպես զի պաշտօնական մեր հարաբերութիւններու մէջ դժուարութիւններու չբաղինք" (տե՛ս նույն տեղում, թ. 17):

[18] ՀԱԱ, ֆ. 654, ց. 4, գ. 16, թ. 1:

[19] Մոկսի Մուրթուլլա բեյը և Շատախի ցեղապետ Շեքիրի որդի Լեզքին, ռուսական հրամանատարությանը հպատակություն հայտնելով, իրենց ընտանիքներով ու ընտանի կենդանիներով բնակություն են հաստատում Հայոց ձորի հայկական գյուղերում (տե՛ս Նիթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, հ. ԺԲ, Պէյրութ, 2016, էջ 204): Դա, սակայն,

պես նախկինում, այնպես այս պատերազմի ժամանակ քրդերը շարունակեցին հավատարմորեն ծառայել օսմանյան իշխանություններին[20]:

Իրադրությունը Վանում, հատկապես, գավառների հայկական բնակավայրերում սպառնալից էր: Քրդերը շարունակում են հարձակումները հայկական բնակավայրերի վրա: Ինչպես վկայում է ժամանակի մամուլը, քրդական ավարառություններին ենթարկվում են ոչ միայն հայերը, այլև՝ եզդիները[21]:

1916 թ. փետրվարի 9-ին Ջ. Չանկայյանը և ամերիկահայ կամավորական Ներսես Դշխոյանը կաթողիկոս Գևորգ Ե-ին ուղղված նամակում, այլ հարցերի հետ բարձրացնում են նաև միլիցիայի կազմը համալրելու խնդիրը: Նրանք գրում են. "Նկատելով, որ Վասպուրականի քաղաքապահ ներկայ զորաց խումբը կը բաղկանայ միայն կամաւոր հայերէ, որոնք արդէն անօրինակելի կերպով օգտակար եղած են իրենց փոքր կազմով, ներգաղթումի պարագային բազմացող ժողովրդեան նոյնպէս ամեն պետքէրուն և պահպանութեան հարկ եղած գոհացում մը տալու համար, անհրաժեշտ է ըստ այնմ աւելի ուժեղացնել և մանաւանդ ապահովել գոյութիւն ունեցող այդ կազմը"[22]:

նրանց և, հատկապես, Մուրթուլլա բեյին չխանգարեց մեկ տարի անց կրկին զենք բարձրացնել ռուսների դեմ (տե՛ս Ռ. Սահակյան. Փաստաթղթեր Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Կովկասյան բանակի հետախուզական ծառայությունների գործունեության մասին.– ԲՀԱ, 2009, № 2, էջ 48):

[20] Դա են վկայում Կովկասյան բանակի հետախուզական ծառայությունները. փաստում են, որ պատերազմի ընթացքում օսմանյան հրամանատարությունը հետախուզական տեղեկությունները ստանում էր նաև քրդերից, որոնք, գերազանց կողմնորոշվելով տեղանքում, կարողանում էին հաճախ աննկատ մոտենալ ռուսական զորամասերի տեղակայված վայրերին (տե՛ս Ռ. Սահակյան. Փաստաթղթեր Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Կովկասյան բանակի հետախուզական ծառայությունների գործունեության մասին, էջ 50):

[21] "Հորիզոն", 31. VI. 1916: Ելուզակների կողմից անհայտ հանգամանքներում սպանվել էր երկրապահ, մալաթիացի Ռուբեն Մուրադյանը (տե՛ս "Աշխատանք", 28. V. 1916):

[22] ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1979, թ. 8: 1916 թ. ապրիլի 14-ի ՀՅԴ Արևելյան բյուրոյին ուղղված նամակում Գրիգոր Բուլղարացին (Գրիգոր Կեռգյան) իր դժգոհությունն է հայտնում Վանում և նահանգում տիրող անիշխանական վիճակից: Շարունակվում են սպանությունները, նաև՝ կողոպուտները: Իր ունեցած տեղեկությունների համաձայն՝ Ա. Տերմենն որոշել է լուծարել միլիցիան և "Այնպէս կ՛երեւի, որ հիասթափուած է. կամաց կամաց սկսած է սահմանափակել կամաւորներու շռայլուած իրաւունքները: Անոնց միջոցով նպաստ բաշխելու գործը դադարեցուցած. խոստացած է նոր կոմիտէ մը կազմել որու մէջ պիտի մտնեն Տերմէնը, Կոստիան (Կոստանտին Համբարձումյան – Ռ. Ս.), բժիշկ Մատինեան (երկուքն ալ մեր ընկերներից) եւ ուրիշներ…" (տե՛ս Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, հ. ԺԲ, էջ 194): Կարծում ենք, որ նշանավոր գործիչն այնքան էլ ստույգ տեղեկություններ չուներ Վանում կատարվող դեպքերի մասին: Այո՛, քաղաքում և գավառներում շարունակվում էին ավարառություններն ու սպանությունները, սակայն ի՞նչ կարող էին անել մի բուռ և վատ զին-

Հայկական կողմն Ա. Տերմենին առաջարկում է միլիցիային հանձնել քաղաքի հասարակական կարգի պահպանումը, սակայն, շրջանապետն ունենալով նահանգապետ, գեներալ Պ. Վորոնովի հրամանը, չի համաձայնվում[23]:

1916 թ. հուլիսի 25-ից Վանում տեղեկություններ են ստացվում, որ Կարճկանում կազակների կողմից տեղի են ունեցել սպանություններ՝ "Պաղապրակ" կոչվող կիրճում սպանվել են երեք և Օղվանից դաշտում ևս երեք հայ գյուղացի[24]: Միաժամանակ ռուսական հրամանատարությունը կարգադրում է, որպեսզի Գավաշ և Կարճկան գավառների բնակչությունը գաղթի, քանի որ թուրք-քրդական ուժերը հարձակում են ձեռնար-

---

ված միլիցիոներներ, որոնց կարգավիճակը նույնիսկ չէր հստակեցված: Բացի այդ, առկա էին կուսակցական տարաձայնություններ. չէ՞ որ ամերիկահայ կամավորների մի մասը Վերակազմյալ հնչակյաններ էին, Ա. Եկարյանն ու իր զինակիցները՝ Սահմանադիր-ռամկավարներ: Վերջիններս, ինչպես ընդունված էր քաղաքական կյանքում, առաջնորդվում էին իրենց կուսակցին կարևոր պաշտոններում ընդգրկելու քաղաքականությամբ. Ա. Թերզիբաշյանին համաձայնվեցին նշանակել Վանի քաղաքապետի պաշտոնին, եթե նա անդամագրվի կուսակցությանը [տե՛ս Ա. Դարբինեան. Հայ ազատագրական շարժման օրերէն (Յուշեր 1890էն 1940), Փարիզ, 1947, էջ 343]: Այնպես որ Գր. Բուլղարացու դժգոհությունն այնքան էլ տեղին չէ: Միլիցիան ապրիլին չլուծարվեց: Այն լուծարվեց ավելի ուշ, սակայն դեր ունեցավ հայ բնակչության ծանր դրությունն որոշ չափով թեթևացնելու գործում: Փաստենք, որ հայ ու ասորի գաղթականներին հացի բաշխումը կատարել են Ջ. Չանկալյանն իր չորս ենթակայի հետ: Նրանք կարողանում են հաջողությամբ կատարել իրենց վրա դրված պարտականությունը, որի համար էլ պարենավորման մարմինը որոշում է յուրաքանչյուր միլիցիոների պարգևատրել 15-ական ռուբլով (տե՛ս "Վան-Տոսպ", 7. I. 1916, էջ 15): Պետք է նշենք նաև հետևյալը. Գր. Բուլղարացին Ազգային բյուրոյի հանձնարարությամբ 12 ընկերով գործել է Վանում և հիմնականում մասնակցել ռուսական ստորաբաժանումների հետախուզական գործողություններին [տե՛ս Դէպքերը Վասպուրականում (Հմ. Մանուկեանի յիշատակարանը).– "Վէմ" (Փարիզ), թիւ 1, 1937, էջ 59]: Ա. Տերմենը նկատել էր հայ, ինչպես նաև՝ մյուս հասարակություններում առկա կարևոր "ցավերից" մեկը՝ կուսակցական երկպառակությունները, որոնք հնարավորություն չէին տալիս ազգը միավորել ու հասնել իր առջև դրված նպատակին: Նա ցանկություն է հայտնում, որպեսզի "Հայ հասարակութիւնը, կամ, աւելի ճիշտ, հայ ժողովուրդը մոռանայ բոլոր կուսակցական հաշիւները, հզոր կերպով միանայ, ընդհանուր, անկուսակցական կուլտուրաստեղծագործական աշխատանքի համար, որի հետևանքները շատ շուտով կարտայայտուեն, վերականգնելու բարեկեցութիւնը Վանի շրջանում" (տե՛ս "Վան-Տոսպ", 7. II. 1916, էջ 15): Հարկ ենք համարում նաև նշել, որ ժամանակակիցներից մեկն ընդհանուր առմամբ դրական է գնահատել շրջանապետի գործունեությունը. "Շրջանապետ Պ(արոն Ռ. Ս.) Տէրմէնը… թէև թոյլ բնաւորութեան տէր և անվճռական մարդ է, բայց չափազանց բարեացակամ է դէպի երկիրը վերստին բարգաւաճ և շէն տեսնելու համար" (տե՛ս "Աշխատանք", 12. X. 1916):

[23] "Համբաւաբեր" (Թիֆլիս), 14. VIII. 1916, էջ 1032:

[24] ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 122, թ. 1 շրջ.:

կել Դատվանի և Բիթլիսի (Բաղեշ) ուղղությամբ: Գեներալ Պ. Վորոնովը հրամայում է, որպեսզի սկսեն Վանից որբերի ու հիվանդների տարհանումը: Ինչպես վկայում են վանեցիները, "Այս լուրը ճնշող տպաւորութիւն թողուց ժողովուրդի վրայ"[25]: Զ. Չանկալյանը հատուկ կոչով դիմում է Վասպուրականի երիտասարդությանը զինվորագրվել միլիցիային[26]:

Սակայն, չնայած ստացվող հակասական լուրերը նահանջի մասին, Վանի բնակչության ճնշող մեծամասնությունը տրամադրված չէր հեռանալ: Նրանք համոզված էին, որ քաղաքում մնալով ու դիմադրելով՝ ավելի քիչ կորուստներ կունենան, քան տարհանվելիս: Բոլորի մոտ վառ էին 1915 թ. հուլիսյան նահանջի հետևանքները[27], ուստի դիմեցին գեներալ Պ. Վորոնովին, որպեսզի զենք ու զինամթերք տրամադրի թուրքքրդական ուժերին դիմագրավելու համար: Պ. Վորոնովը հեռագիր է ուղարկում Կովկասյան 2-րդ հեծելազորային կորպուսի հրամանատար, գեներալ Ֆ. Չեռնոզուբովին՝ խնդրելով որոշ քանակությամբ զենք տրամադրել հայերին: Վերջինս, սակայն, մերժում է, ուստի Պ. Վորոնովը վանեցիների հետ տեսակցության ժամանակ ակնարկում է, որ ժողովուրդը պետք է գաղթի[28]:

1916 թ. հուլիսի 27-ի երեկոյան հրավիրվում է Վանում գործող կազմակերպությունների և քաղաքի ներկայացուցիչների ժողով, որտեղ կազմվում են երկու հանձնախումբ՝ մեկը ինքնապաշտպանությունը կազմակերպելու, մյուսը բնակչության կանոնավոր գաղթը կազմակերպելու նպատակով: Զինված խմբում ընդգրկվում է մոտ 160 երիտասարդ[29]: Ապա սայլերով ու կառքերով սկսվում է Հայոց ձորից և Գավաշից հիվանդների, կանանց ու երեխաների տեղափոխությունը: Վանում գործող ընկերությունները պահեստներում գտնվող հացը, շաքարը, բրինձը և հագուստը սկսում են բաժանել գավառներից ժամանածներին: Նահանջի նախապատրաստություններ են տեսնում նաև զինվորականները:

1915 թ. հուլիսի 29-ի գիշերը զինված հետևակ խումբը Գր. Խլղաթյանի գլխավորությամբ շարժվում է Բերկրի՝ գաղթող հայերի անվտանգությունն ապահովելու նպատակով: Վանեցիների մոտ վառ էին 1915 թ. հուլիսյան նահանջի ժամանակ Բերկրիի կիր-

---

[25] *Նույն տեղում, թ. 1 շրջ., 2:*

[26] *"Հորիզոն", 14. IX. 1916:*

[27] *Վանում Կովկասի հայոց բարեգործական ընկերության լիազոր Գ. Օհանջանյանի համոզմամբ՝ "Ժողովուրդը որոշել էր չը թողնել Վասպուրականը ինչ գնով էլ լինի…: Բնազդօրեն ըմբռնելով իրերի դրութիւնը, նա (ժողովուրդը – Ռ. Ս.) համոզված է, որ թողնելով Վասպուրականը, ինքը այլևս նրա տէրը չէ՝ քիւրդն ու ասօրին են նրան տիրելու" [տե՛ս Ռ. Օ. Սահակյան. Արևմտյան Հայաստանի վերաշինության խնդիրը.– "ՎԷՄ" (Երևան), 2010, թիվ 1, էջ 189]:*

[28] *ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 122, թ. 2, "Աշխատանք", 17. VIII. 1916:*

[29] *"Աշխատանք", 17. VIII. 1916:*

ճում քրդերի կատարած ոճրագործությունները, որտեղ զոհվեցին շուրջ 40 հազար հոգի: Վանում մնում են Ա. Տերմենի՝ կազակներից բաղկացած պահակախումբը, Ջ. Չանկալյանի ու Բուլղարացի Գրիգորի մարտիկները[30]:

Եվ երբ բնակչությունը սկսեց լքել Վանը, անսպասելիորեն գեներալ Պ. Վորոնովը 126[31] միավոր զենք է հանձնում Ա. Տերմենին, որ վերջինս դրանք հանձնի տեղական միլիցիային՝ միաժամանակ կարգադրելով, որպեսզի միլիցիան հեռանա քաղաքից: Շրջանապետ Ա. Տերմենը, սակայն, փորձում էր համոզել բնակչությանը չտարհանվել, քանի որ քաղաքին որևէ վտանգ չի սպառնում: Բայց Պ. Վորոնովն անդրդվելի էր. ուստի և՛ բնակչությունը, և՛ միլիցիան հարկադրված էին ենթարկվել: Վանում մնում է Ա. Տերմենն իր պահակազորով[32]:

Վանեցիների վկայությամբ՝ գեներալ Պ. Վորոնովն աշխատում էր վերջին չորս օրվա ընթացքում անորոշության մեջ պահել հայերին, և մեկը մյուսի հետևից հակասական հրամաններ էր տալիս: Ի վերջո, Ա. Տերմենին հաջողվում է թույլտվություն ստանալ և օգոստոսի 2-ին միլիցիան վերադարձնել Վան[33]: Միլիցիան այստեղ մնում է մինչև օգոստոսի 8-ը, որի ընթացքում ականատես է լինում, թե ինչպես է ռուսական բանակի գնդապետ Աղալարովն իր ենթակաների հետ կողոպտում Համառուսաստանյան քաղաքների միության կովկասյան մասնաճյուղի պահեստն ու ամերիկյան միսիոներների բերած և 100 հազար ռուբլի արժողությամբ հագուստը: Հանցագործության հետքերը թաքցնելու նպատակով՝ ելուզակները երկու շինություն են հրդեհում[34]:

Վանեցիների գաղթը տեղի է ունենում գրեթե առանց կորուստների, քանի որ զինված հայերը կարողացել էին գրավել առավել կարևոր ռազմավարական դիրքերը, բացի այդ՝ բնակչությունը հիմնականում ապահովվել էր տեղափոխման միջոցներով՝ սայլերով ու կառքերով: Ականատեսի վկայությամբ, գաղթողների թվում էր և Ա. Տերմենի կինը՝ Անտուանետան, ով իր կառքում տեղ է տալիս երեք փոքրահասակ աղջիկների[35]:

1916 թ. օգոստոսի 1-ի Ա. Տերմենի հրամանով քաղաքը կառավարելու համար նոր պաշտոնյաներ են ընտրվում[36]: Քաղաքապետի պաշտոնը պահպանում է Ավ. Թերզիբաշյանը[37]: Հայկական թերթերից մեկում տեղ գտած այս կարճատև հաղորդագրությու-

---

[30] Նույն տեղում:

[31] Ըստ Ջ. Չանկալյանի՝ 123 հրացան (տե՛ս "Հորիզոն", 22. IX. 1916):

[32] ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 122, թ. 2 և շրջ.:

[33] Նույն տեղում, թ. 2 շրջ.:

[34] Նույն տեղում:

[35] "Աշխատանք", 10. VIII. 1916:

[36] ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 122, թ. 3:

[37] "Հորիզոն", 21. IX. 1916: Վերակազմվում է նաև դատարանը, որը շարունակում է գլխավորել Ա. Համբարյանը: Անդամներն էին՝ իրավաբան Եղիա Քաջունին և Երամյան դպրոցի նախկին փոխտեսուչ Մարտիրոս Նալբանդյանը (տե՛ս "Աշխատանք", 28. V. 1916):

նից հետո կարելի է ենթադրել, որ հունիսին Ա. Եկարյանի փոխարեն պաշտոնապես միլիցիայի հրամանատար է նշանակվել Ջ. Չանկալյանը[38]: Վերջինս օգոստոսի 29-ին մեկնում է Էջմիածին՝ կաթողիկոսարանին հանձնելու հավաքված եկեղեցական արծաթե սպասքեղենը, անոթներն ու այլն[39]:

Օգոստոսի 9-ին միլիցիան Վանի Թիմար գավառի մի քանի գյուղերից վռնդում է կոդոպուտի նպատակով եկած քրդերին:

Օգոստոսի 12-ին Ջ. Չանկալյանը ընկերներին հայտնում է, որ գեներալ Պ. Վորոնովը "Միլիցիայի գոյութիւնը չի ճանչնար, երիտասարդներուն զէնք տուած է միայն ժողովուրդը ապահով անցկացնելու համար վտանգաւոր վայրերէն դէպի Կովկաս"[40]:

Օգոստոսի 24-ին կաթողիկոսին ուղղված նամակում Երևանի արևմտահայ փախստականների հանձնաժողովի անդամներ՝ Ա. Աճեմյանը, Սամվել Մեսրոպյանը, Հայկակ Կոսոյանը և Բարունակ Կապուտիկյանն առաջնահերթ խնդիրներից էին համարում միլիցիայի գոյության օրինականությունը ճանաչելն ու զենք կրելու իրավունք ստանալը[41]:

Յավոք, օգոստոս ամսին հայկական միլիցիան երկար չկարողացավ գործել: Կրկին լուրեր են տարածվում նահանջի վերաբերյալ: Ինչպես վկայում է Հմ. Մանուկյանը, "Վասպուրականը արդեն կը բռնէ նահանջի ճամբան. այս գաղթի ընթացքին, մեր ընկերները, որոնք իրենց հետ ունէին մինչեւ 70-ի հասնող զինուորներ, կը մնան Վանում…: Եկարեանի միլիցիան կը վարկաբեկուի, ինքը կը հեռանայ եւ տեղը կանցնի Չանկալեան, վերակազմեալ հնչակեան մը, որ ընկած էր մեր ընկերներու ազդեցութեան տակ եւ գժտուած ռամկավարներու եւ Եկարեանի հետ"[42]: ՀՎՀ-ը Վան է գործուղում Մ. Մինասյանին, ով, ըստ Կովկասի ժանդարմական վարչության օպերատիվ-հետախուզական տվյալների, խառնակություն է սերմանում Սահմանադիր-ռամկավարների և Վերակազմյալ հնչակյանների միջև ու միջամտում է տեղական իշխանությունների գործերին: Ա. Տերմենը, տեսնելով Մ. Մինասյանի նման միջամտությունները, իր ենթակայության տակ գտնվող միլիցիայի հրամանատարությունը հանձնեց Ջ. Չանկալյանին[43]:

Ինչպես նշում է 1916 թ. հուլիսի 20-ի զեկուցագրում Թիֆլիսի ժանդարմական վարչության պետ, գնդապետ Ի. Պաստրյուլինը ոստիկանության դեպարտամենտին. "Քաղաքականության նման փոփոխությունը ռամկավարների նկատմամբ դուր չեկավ "Մշակ" թերթի խմբագիր Հ. Առաքելյանին, ով հակադաշնակցական բոլոր կուսակցութ-

---

[38] "Աշխատանք", 9. VI. 1916:

[39] "Հորիզոն", 21. IX. 1916:

[40] "Աշխատանք", 24. VIII. 1916:

[41] ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 122, թ. 4:

[42] Դէպքերը Վասպուրականում, էջ 60:

[43] "Հորիզոն", 21. IX. 1916:

յունների հոգին էր: Նա դադարեցրեց "Հայաստանի տնտեսության վերականգնման կոմիտեի" միջոցներից նշված միլիցիայի (դրամական – Ռ. Ս.) օժանդակությունը, որի հետևանքով միլիցիան հայտնվում է ճգնաժամային դրության մեջ"[44]:

Ինքնին հասկանալի է, որ ռուսական իշխանությունները գրեթե ամենայն մանրամասնությամբ տեղյակ էին կուսակցությունների միջև առաջացած տարաձայնություններին, սակայն որևէ քայլ չկատարեցին մարելու հակասությունները և մոտ 100-ի հասնող հայկական միլիցիան պահպանելու ուղղությամբ: Փաստորեն, ստացվեց, որ հայերն իրենց իսկ ձեռքով 1916 թ. հոկտեմբերին վերացրեցին Վանի հայության անվտանգությունն որոշ չափով պաշտպանող աշխարհազորային ստորաբաժանումը: Վերացվեց այն, թեկուզ փոքրիկ, ուժը, որը հույս ու հավատ էր ներշնչում վասպուրականցուն, տեսել էր Ա. Մանուկյանի գլխավորած հայկական իշխանության կատարած հսկայածավալ աշխատանքը, երբ գրեթե բոլոր խավերը, անկախ կուսակցական պատկանելությունից, լծվել էին մեկ միասնական գործի: Վանում գործող դատարանը, քաղաքապետարանը, տնտեսական մարմինը, միլիցիան և այլ կառույցներ պետականության որոշակի խորհրդանիշներ էին. ահա այս հանգամանքն էր, որ չհասկացան հայ քաղաքական ուժերը և չսատարեցին դրանց ծավալմանն ու պահպանմանը:

Ռուսական իշխանությունները հասան իրենց նպատակին. հայերն իրենց չկշռադատված գործողություններով "օգնեցին" լուծարել փոքրիկ ստորաբաժանումը, որը կոչված էր պաշտպանել Վասպուրականի հայությանը: Նահանջից հետո նաև լուծարվում են Վանի դատարանն ու ոստիկանությունը, սակայն շարունակում է գործել քաղաքապետարանը:

Միլիցիայի և, հատկապես, Ա. Տերմենի[45] հեռանալուց հետո իրավիճակը Վան-Վասպուրականում ավելի վատացավ: Գր. Օհանջանյանի վկայությամբ՝ "Երկու իշխանությունները՝ քաղաքական և զինուորական՝ ընդհարում էին իրար հետ, ժողուրդին պատրուակ արած և միշտ էլ ժողուրդն էր լինում տուժողը"[46]:

Այսպիսով, 1915 թ. հոկտեմբերից մինչև 1916 թ. սեպտեմբերը Վանի նահանգում գործում էր հայկական միլիցիան, որն իրականացնում էր ոչ միայն ոստիկանական, այլ նաև ներքին զորքերին հատուկ գործառույթներ, իսկ երբեմն էլ ռուսական հրամանատարության հանձնարարությամբ՝ հետախուզություն:

Ցավոք, 1916 թ. հոկտեմբերին հայկական միլիցիան լուծարվեց, որի գլխավոր պատճառներն էին.

---

[44] ՀԱԱ, ֆ. 1168, ց. 1, գ. 315, թ. 16–17:

[45] "Աշխատանք" թերթի Վանի թղթակիցը հետևյալ կերպ է գնահատել Ա. Տերմենի գործունեությունը Վանի օգոստոսյան նահանջի ժամանակ. "Շրջանապետ Տերմէնը, չնայած իր ցայժմ ցուցուցած թոյլ վերաբերմունքին, ճգնաժամային այս օրերուն, ցոյց տուաւ վերին աստիճան աչալուրջ և հայրենասեր ընթացք" (տե՛ս "Աշխատանք", 17. VIII. 1916):

[46] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 171, թ. 1:

1. ռուսական իշխանությունների անբարյացակամ վերաբերմունքը,

2. միլիցիայի ղեկավարման և ֆինանսավորման խնդրում կուսակցական մոտեցման դրսևորումը, որն անթույլատրելի էր մարտական ստորաբաժանման դեպքում,

3. ֆինանսական միջոցների անբավարարությունը:

ОРГАНИЗАЦИЯ МИЛИЦИИ ВАНСКОЙ ПРОВИНЦИИ
(Октябрь 1915 г. – сентябрь 1916 г.)

РУБЕН СААКЯН

Резюме

В начале мая 1915 г. город Ван и большая часть Ванской провинции были освобождены армянскими добровольцами и частями русской армии. По приказу русского командования было сформировано Временное Ванское правление (губернаторство) под руководством видного деятеля армянского освободительного движения А. Манукяна. Однако в июле русские войска внезапно отступили, и Ванское правление было ликвидировано. После вторичного занятия г. Вана и части провинции русскими войсками, губернатором Вана был назначен генерал П. Воронов, а начальником округа – подполковник полиции А. Термен, который имел большой опыт работы на окраинах России: в Туркестанском генерал-губернаторстве и в Китае. Своим первым распоряжением А. Термен организовал милицию из армян. Начальником милиции был назначен видный деятель армянского освободительного движения А. Екарян, а заместителем – доброволец, капитан армии США Джим (Петрос) Чанкалян. По начальному плану, милиция должна была состоять из 200 человек, однако из-за нехватки финансов число милиционеров было около 100. Было оговорено, что милицию будет финансировать армянская общественная организация «Комиссия возрождения Армении», а оружием будет обеспечивать русское командование.

Прибыв в г. Ван, А. Термен разделил город на четыре полицейских участка. В обязанности милиции входило не только установление законности, но и обеспечение безопасности жителей армянских, а также айсорских и езидских деревень, на которые нападали курдские банды. По приказу командования милиция иногда проводила разведку. К сожалению, служба милиции была омрачена партийными раздорами. В конце концов, в октябре 1916 г. милиция была расформирована, в основном, по следующим причинам:

1 – недоброжелательное отношение русской военной власти;

2 – в руководстве и финансировании милиции было введено партийное начало, что недопустимо для боевого формирования;

3 – нехватка финансовых средств.

THE ORGANIZATION OF THE POLICE OF THE PROVINCE OF VAN (October 1915 – September 1916)

RUBEN SAHAKYAN

Summary

In early May 1915 the city of Van and most of its province were liberated by Armenian volunteers and units of the Russian army. By the order of the Russian Command the Provisional government of Van (governorship) was formed under the leadership of a prominent figure of the Armenian liberation movement A. Manukyan. However, in July the Russian troops suddenly retreated, and the government of Van was abolished. After the second occupation of the city of Van and part of the province by the Russian troops, General P. Voronov was appointed Governor of Van, and Lieutenant Colonel A. Termen, who had a great experience in the work of the outskirts of Russia, was appointed as a chief of the district in the Governorate - General of Turkestan and in China. A. Termen by his first order organized the police from the Armenians. The prominent figure of the Armenian liberation movement A. Yekaryan was appointed chief of the police, and the volunteer, captain of the US Army Jim (Petros) Chankalian was appointed as his deputy. According to the initial plan, the police had to consist of 200 people, but due to lack of financial resources, the number of police officers was about 100.

It was stipulated that the police will be financed by the Armenian public organization, "The Commission of the Revival of Armenia", and the Russian Command will provide weapons.

Arriving in Van, A. Termen divided the city into four police stations. The duties of the police included not only the establishment of legality, but also the ensuring of the security of the inhabitants of Armenian, as well as Assyrian, Yezidi villages which were attacked by the Kurdish gangs. By the order of the Command, the police sometimes carried out intelligence. Unfortunately, the police service was overshadowed by party strife. In the end, in October 1916, the police was disbanded.

According to our opinion, the main reasons were:

1. the unkind relationship of the Russian military power,
2. party affiliation was introduced in the leadership and financing of the police, which is unacceptable for the combat formation,
3. the lack of financial resources.